նարհ, անազարտ մնացել են իրենց տառերով, Ս. Սարգսի որմին մէջ ազուցեալները՝ մաշած և աւրուած են և չէ կարելի կարդալ նոցա թուականը։ Նոյն իսկ եկեղեցւոյն դիրքը ի միջավայր Կաֆայի, նորա վաղեմի լինելուն յայտնի ապացոյցն է, վասն զի այլ ազգային եկեղեցիք քաղաքին կեդրոնէն հեռու կ'ինկնան, և մեծաւ մասամբ այժմեան արգելանոցին մէջը և մօտերը, ուր և առանձին թաղ կազմելով, բնակութիւն հաստատել են հայկազունք որք 1330 ին բազմութեամբ եկած են ի Կաֆա Գենուացի իշխանաց համաձայնութեամբ։ Այսպէս կը գրէ Ղրիմեցի մի ցայսմաւուրքի յիշատակարանը, « Դեսպան յղեն (Հայք) ի Ղռիմ առ իշխանն Ջինիւիզաց, որ բնակէր ի մէջ Ֆառնկհիսարին Ֆէօդոսիու, ուստ դնեն ընդ իշխանին Ֆէօդոսիու։ Ելեալ ի յԱխսարայէ իշխանք և ազնիւք և հասարակ ժողովուրդք, վառեալք զինու, պատերազմելով ընդ Թաթարացն, ճեղքեալ գան ի Ղռիմ. և բնակին ի Ֆէօդոսիա, ի Կազարաթ և ի Սուրխաթ և ի կողմանս սոցա. այս եղև ՉՀԹ թուին »։

Հայոց բնակութեան տեղ կը տրուի Ֆռէնկ հիսարէն դուրս դէպ ի հարաւային սարերը, զոր պարըսպով պատելով ազգայինք, հոն բնակութիւն կը հաստատեն։ Յիշեալ յիշատակարանը կը գրուցէ « Յահէ Հոնականաց (փոխանակ Թաթարաց գրելու) պարսպեցին քաղաքն Ֆէօդոսիա »։ Այս այս պարըսպին մէջ շինուած են մեծաւ մասամբ բազմաթիւ հայ եկեղեցիք կամ մատրունք. սակաւ են պարսպէս դուրս մնացեալները, իսկ ի միջավայր քաղաքին միայն Ս. Սարգիս ունեցել է տեղի։ Քաղաքիս և ապա ի նմա մեր ազգայնոց բռնած դրքէն կը հետևցընեմք. որ Ս. Սարգսի շինութիւնը, շատ